



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ



Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)
ԱՐՏԵՆԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

ԱՐԱԳԱԾՈՏՆ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերլուծություն իրականացնող կառույց	2
Համայնքների մրցակցային առավելությունները	5
Համայնքների տնտեսության առաջատար ճյուղերը	6
Հողագործություն	6
ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	8
Այգեգործություն	9
Ա. Ճյուղի նկարագիրը	9
Բ. Պահանջարկը և շուկան.....	10
Գ. Գործոնների որակը այգեգործության մեջ	12
Դ. Հարակից և օժանդակող ճյուղերը.....	13
ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....	14
Անասնապահություն.....	14
Ա. Ճյուղի նկարագիրը	14
Բ. Պահանջարկը և շուկան.....	17
Գ. Գործոնների որակը.....	17
Դ. Հարակից և օժանդակող ճյուղեր.....	18
ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	20
Քարամշակում.....	21

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՊՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Արտենի և Արագածավան համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի դեկտեմբեր ամսին՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրեանքների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքների տնտեսական նկարագիրը

Արտենի և Արագածավան համայնքները գտնվում են Թալինի շրջանում՝ շրջկենտրոնից մոտ 18 կմ հարավ-արեւմուտք: Մարզկենտրոնից գտնվում են 63-71 կմ հեռավորության վրա: Տեղակայված են Արմավիր-Գյումրի միջպետական նշանակության ճանապարհի վրա:

Գյուղերը գտնվում են ծովի մակարդակից 1200-1255 մ բարձրության վրա: Կլիման մերձարեւադարձային, չափավոր ցամաքային է: Ամառները շոգ են եւ չոր, ձմեռները՝ ցուրտ, ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -4,-6-ի սահմաններում, հուլիսյանը՝ 22-24 աստիճանի սահմաններում: Բնական լանդշաֆտները չոր տափաստաններ են, որոնք ոռոգման արդյունքում ձևափոխվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Հողերը ոռոգվում են Թալինի ջրանցքի ջրերով:

Արագածավան համայնքը 1974 թ-ից եղել է քաղաքատիպ ավան, 1995 թ-ից հետո՝ գյուղական բնակավայր: Համայնքը հայտնի է նաև որպես քարարդյունաբերության և քարամշակման կենտրոն, շնորհիվ բնական պաշարների: Այստեղ է գտնվում “Արագած պեղիտ” ձեռնարկությունը, որն օգտագործում է սեփական հումքը:

Գյուղատնտեսության մեջ մեծ բաժին ունի բուսաբուծությունը: Հողահանդակները հիմնականում օգտագործվում են որպես վարելահողեր, մշակում են հացահատիկ, կերային և բանջարաբուստանային կուլտուրաներ, պտուղներ: Բուծում են մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ: Ունեն կաթնամթերքի արտադրության կետեր:

Այստեղ բուծում են տոհմային ոչխարների տեղական “Բալբաս” և “Մազեխ”, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունից ներկրված “Էդելբասվյան” և “Ռոմանովյան” ցեղատեսակները: Վերջինս աչքի է ընկնում բարձր գառնատվությամբ (մինչև 270%):

Համայնքների վերաբերյալ տեղեկություններ.

	Արտենի	Արագածավան
Բնակչության թիվը	3786	6060
Տնային տնտեսությունների թիվը	992	1335
Վարելահողեր	1602 հա	1335 հա
Բազմամյա տնկարկներ	490 հա	1020 հա
Խոտհարքեր	-	-
Արոտավայրեր	1061 հա	6427 հա
Տրակտորներ	35	30
Բեռնատարներ	28	34

Համայնքների մրցակցային առավելությունները

- ⇒ Ոռոգման ջրի առկայություն (70%՝ ինքնահոս, 30%՝ մղովի):
- ⇒ Արոտավայրերի բավարար քանակ, զարգացող անասնապահություն:
- ⇒ Մրցունակ և զարգացող այգեգործություն. Տեղի ծիրանն առանձնանում է համային և որակական հատկություններով, դիմացկուն է, հասունացման սեզոնն ավելի ուշ է սկսվում երկրի մնացած գոտիների համեմատ, ունի բարձր զին:
- ⇒ Զարգացած տոհմային ոչխարաբուծություն (բրդատու, մսատու):
- ⇒ Երկաթգծի կայարան՝ փոխադրումների հեշտ կազմակերպում:
- ⇒ Պեռլիտի հումք, քարի հանքեր՝ բազալտ, տուֆ, օբսիդիան:

Համայնքների տնտեսության առաջատար ճյուղերը

Արագածավան և Արտենի համայնքներում բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Զարգացած է նաև քարարդյունաբերությունն ու քարամշակումը, սակայն բնակչության ոչ մեծ մասն է այստեղ ներգրավված:

Հողագործություն

Հողագործությամբ զբաղվող տնտեսությունները մշակում են ձմերուկ, վարունգ, առվույտ, գարի և ցորեն:

Մշակաբույսեր	Արտենի	Արագածավան	1 հա-ի միջին բերքատվությունը
Բանջար-բոստանային (հիմնականում ձմերուկ)	150 հա	60 հա	35 տ.
Ցորեն	35 հա	300 հա	2.5 տ.
Գարի	120 հա	400 հա	2.5 տ.
Առվույտ	1175 հա	1300 հա	9 տ.

Երկու համայնքներից բուսաբուծության մեջ ներգրավված են մոտ 400 տնտեսություններ:

Մշակաբույսերի ծավալների բաշխվածքն ըստ տնտեսությունների

Տնտեսությունների դասակարգումը	Մշակվող հողակտորների չափերը	Տնտեսությունների բախշվածքը
Խոշոր	5 հա և ավելի	10%
Միջին	1-5 հա	60%
Փոքր	Մինչև 1 հա	30%

Մշակաբույսերին հատկացված վարելահողերի մեծ մասը բաժին է ընկնում առվույտի մշակմանը: Բերքատվությամբ այս ոլորտը զիջում է միայն Տավուշի և Արարատի մարզերին: Մնացած գոտիների համեմատ Արագածավան և Արտենի համայնքներում առվույտի մշակումը մրցունակ է և արդյունավետ: Բացի այդ, առվույտի մշակումը

համայնքներում տարածված է՝ պայմանավորված անասնապահության զարգացմամբ: Տնտեսությունների մի մասն օգտագործում է առվույտի պաշարը սեփական ֆերմաներում անասնապահության համար, մյուս մասն էլ վաճառում՝ համայնքում և համայնքից դուրս: Բացի վարելահողերում մշակվող ծավալներից, մոտ 400 հա առվույտ էլ մշակվում է պտղի այգիներում:

Առվույտի մշակման մեկ հեկտարի վրա կատարվող ծախսերը

Հողված	Մեկնաբանություն	Գումար
Վար		30 000դ
Ցանքս,սերմ	Կատարվում է 6 տարին մեկ, 60000դր.	10 000դ
Ակոս/առու հանել		10 000դ
Կուլտիվացիա		25 000դ
Ոռոգման ջուր		90 000դ
Մրսկում, բուժանյութ		10 000դ
Քաղ	3x15 000դր.	45 000
Հակերի կապում		70 000
Զրոդ	1 մարդ, 5անգամ/2օր, 10000դրամ	50 000դ
Ընդամենը		340 000դ

1 հա առվույտի մշակման համար ծախսվում է 340 000 դրամ: Հեկտարից ստացվում է մոտ 700 հակ առվույտ կամ միջինը 9 տոննա: 1 հակի վաճառքի գինը տարվա շուկայի իրավիճակից կախված տատանվում է 800-1200 դրամ, իսկ ինքնարժեքը՝ 485 դրամ: 1 հակը 1000 դրամով վաճառելու դեպքում 1հա ից ստացվում է 360 000 դրամ շահույթ:

Մշակվող բանջար-բոստանային մշակաբույսերից 90%-ը բաժին է ընկնում ձմերուկի աճեցմանը, մնացած 10%-ը վարուզ և այլն: Ձմերուկի մշակումը որևէ հասկությամբ չի առանձնանում երկրի այլ գոտիների նույն ոլորտներից: Բերքատվությամբ (1հա-ից 35տ) և որակական հասկություններով գրեթե նույն բնույթն են կրում:

Ցորենի և գարու մշակումը համընկնում է հանրապետության միջին բերքատվության հետ՝ 2-3 տոննա 1 հեկտարից: Սակայն բերքի ինքնարժեքն այստեղ բարձր է

ստացվում, որովհետև նշված բերքի քանակն այս համայնքներում ստանում են ջրելու միջոցով, իսկ մյուս գոտիներում ցորենի և գարու դաշտերը չեն ոռոգվում:

Ամփոփում

Բացի բանջար-բոստանային մշակաբույսերից, մշակվող մնացած տեսականին ցածրարժեք մշակաբույսերն են: Չի մշակվում նաև ոռոգելի վարելահողերից մոտ 500 հա-ը, ինչը համայնքների բնակիչները հիմնավորում են ջրի թանկ սակագնով: Մակայն, եթե անգամ ջրի սակագինը չկարգավորվի, ցածրարժեք մշակաբույսերին հատկացված հողերում մշակվի օրինիակ՝ ազնվամորի, պատկերը բոլորովին այլ կլինի: Այն դեպքում, երբ հացահատիկի 1 հա-ից լավագույն դեպքում ստացվում է 3 տոննա բերք, որն էլ ապահովում է մոտ 200-300 հազար դրամ շահույթ, ազնվամորու դեպքում 1 հա-ից ստացվում է միջինը 7 տոննա բերք, որն ապահովում է առնվազն 1մլն. դրամ շահույթ:

Հեռանկարային է նաև ջերմոցային տնտեսությունների կայացումը՝ պայմանավորված համայնքի բնակլիմայական պայմանների և գյուղ. սեզոնի երկարատևությամբ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- ⇒ Ոռոգման ջրի սակագների կարգավորում:
- ⇒ Հատապտուղների այգիների հիմնում:
- ⇒ Բարձրարժեք այլ մշակաբույսերի մշակում:
- ⇒ Որակյալ բուժանյութերի մատակարարում:
- ⇒ Ոլորտի նորամուծությունների տարածում/իրագրելում:
- ⇒ Ջերմոցային տնտեսությունների հիմնում:
- ⇒ Առվույտի սերմերի արտադրություն:
- ⇒ Գյուղտեխնիկայի թարմացում (կոմբայն և այլն):

Այգեգործություն

Ա. Ճյուղի նկարագիրը

Պտղաբուծության մեջ հիմնական մասը բաժին է ընկնում ծիրանի աճեցմանը, ապա՝ խնձորի և սալորի: Քիչ չեն նաև խաղողի այգիները: Ընդհանուր առմամբ այգեգործությամբ զբաղվում են մոտ 550 տնտեսություններ:

Մշակվող մրգերի ծավալներն ըստ համայնքների.

Այգիներ	Արտենի	Արագածավան
Ծիրան	200 հա	660 հա
Խնձոր	130 հա	90 հա
Սալոր, դեղձ, տանձ	50հա	100 հա
Խաղող	41 հա	130 հա

Այգիների ծավալների բաշխվածքն ըստ տնտեսությունների

Այգիներ	Մշակվող հողակտորների չափերը	Տնտեսությունների բախշվածքը
Խոշոր	30-100 հա	3%
Միջին I	5-30 հա	10 %
Միջին II	1-5 հա	37 %
Փոքր	Մինչև 1հա	60 %

Վարելահողերն այս համայնքներում եղել են չոր տափաստաններ: Ռոտզելի դարձնելու արդյունքում վերջին տարիներին սկսել են հիմնել այգիներ: Որպես ավանդական գյուղատնտեսության ճյուղ՝ այգեգործությունն այս համայնքներում զարգացած չի եղել: Մարդիկ այգեգործության փորձը վերցրել են հարևան Արմավիրի մարզի գյուղերից և, առաջին արդյունքները տեսնելուց հետո, սկսել են տարածվել ու զարգանալ այս ոլորտում:

Այգեգործների միջև առկա է համագործակցություն: Համագործակցում են գնի սահմանման, մեծ քանակի ծիրանի գնորդների առկայության դեպքում՝ ծավալի

համալրման շուրջ: Հիմնականում կիրառում են այգեգործության ավանդական՝ տարիների փորձից ձեռք բերած գիտելիքներ, խորությամբ ծանոթ չեն (կամ անհասանելի է) ոլորտի նորամուծություններին (նոր բուժանյութեր, հիվանդություններ, բուժումներ, մշակում և այլն):


Բ. Պահանջարկը և շուկան

1 հեկտար ծիրանի այգուց ստացվում է միջինը 20 տոննա բերք, ինչը հանրապետության միջինից բարձր է: Երկու համայնքներում միասին տարեկան արտադրվում է միջինը 15 000 տոննա ծիրան: Կապված բերքի հասնունացման սեզոնի հետ (երկրի այլ մարզերի հետ համեմատած) Արագածավանի ծիրանի անհամեմատ բարձր գին ունի և կայուն շուկա: Թարմ բերքի բարձրորակ մասը՝ մոտ 40%, վաճառվում է հենց այգիներից 400-700 դրամ մեծածախ գներով: 2014թ. ծիրանի բերքը, պայմանավորված երկրի այլ գոտիներում բնական աղետների պատճառով ծիրանի այգիների ցրտահարման հետ, վաճառվել է 350-1700 դրամ մեկ կիլոգրամի դիմաց (հիմնականում՝ արտահանման նպատակով): Միջին որակը կազմում է ևս 40%-ը, որի մեծածախ գինը մոտ 150 դրամ է: Իսկ մնացած 20%-ը վերամշակման ենթակա բերքն է, որի մի մասը, համայնքում վերամշակող արտադրամասեր չլինելու հետևանքում, մթերվում է վերամշակող խոշոր ընկերությունների կողմից 30-50 դրամով, մյուս մասն էլ ուղղվում է տնական եղանակով օդու պատրաստմանը կամ ուղղակի թափվում է:

Խնձորի այգիների մեկ հա-ից ստացվում է միջինը 20 տ. բերք: Համայնքում արտադրված խնձորի 50 %-ը՝ որակյալ մասը, վաճառվում է 200-400 դրամով: Մնացած մասը դրսի վերամշակող ընկերությունները մթերում են կիլոգրամը 15 դրամով՝ ուղղակի այգուց:

Խաղողի բերքը 150 դրամով հանձնում են Արմավիրում և Ամասիայում գործող գինու գործարաններին:

Պտղի իրացման գրաֆիկան



Այգիների (հիմնականում ծիրանի 4-5 տարեկան բերքատու այգու) 1 հա-ի վրա կատարվող ծախսերը և արտադրողականությունը

Հողված	Մեկնաբանություն	Գումար /դրամ/
Էտում	400դրx150ծառ	60 000
Հողի փխրեցում		40 000
Ռոտզում	Ջուր+աշխատուժ	140 000
Բների սպիտակեցում		200 000
Մրսկում, բուժանյութ	3-4 անգամ	250 000
Այգու խոտազրկում		30 000
Պարարտացում		60 000
Այգու ամորտիզացիա		100 000
Ընդամենը		880 000դ

Բերքահավաքի դիմաց վճարումը կատարվում է կիրգրամի հաշվարկով և նախատեսված չի հիմնական ծախսերի մեջ: Միջին հաշվարկով ծիրանի 1հա այգին տնտեսություններին ապահովում է 3-3.5 մլն դրամ շահույթ:

Խնձորի 1 հա այգու վրա ծախսվում է տարեկան մոտ 500 հազար դրամ և ստացվում միջինը 1,5 - 2 մլն դրամ եկամուտ, որակյալ բերքի վաճառքից:

Գ. Գործունների որակը այգեգործության մեջ

Հողը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են ծիրանի և խաղողի աճեցման համար: Մնացած շրջանների համեմատությամբ նախալեռնային գոտով պայմանավորված՝ ծիրանի բերքը Արագածավան և Արտենի համայնքներում 20-25 տոնոշ է հասնում (հանրապետությունում վերջին բերքն է): Այս գործոնը նպաստում է տվյալ ժամանակահատվածում ծիրանի համեմատաբար բարձր գնի սահմանմանն ու արագ իրացմանը: Պտուղները՝ մասնավորապես ծիրանը, դիմացկուն է և երկարակյաց համեմատած երկրի այլ վայրերում աճող ծիրանի հետ:

Ի տարբերություն Հայաստանի մյուս այգեգործական համայնքների, այստեղ ծառերի բողբոջման և ծաղկման շրջանը սովորականից ուշ է սկսվում, երբ ցրտահարություններն արդեն ավարտված են լինում: Այգիների մոտ 80%-ը ապահովված են ոռոգման ջրով: Սակայն գրեթե բոլոր հատվածներում կան խողովակաշարերի վնասվածքներ, յուրաքանչյուր մեկ կիլոմետրում մոտ 100մ, որոնք վերանորոգման կարիք ունեն:

Համայնքներում բացակայում է մասնագետների վերապատրաստման հնարավորությունը: Չկան նաև դեղանյութերի և այգիների բուժման ժամանակակից նորամուծությունների մասին տեղեկատվության աղբյուրներ: Այգեգործները դժգոհում են օգտագործած ջրի դիմաց վճարելու հաշվարկի մեխանիզմից (եթե այդպիսին կա): 1 հա այգին ջրելու համար այգեգործներից գանձում են մոտ 40000 դրամ այն դեպքում, երբ այլ գոտիներում այն կազմում է միջինը 25 000 դրամ: Միակ հիմնավորումն այն է, որ այստեղի հողերը տափաստանային են և մեծ քանակությամբ ջուր են կլանում:

Այգիներն հիմնականում պաշտպանված չեն կարկուտի վտանգից: Միայն Արագածավան համայնքում տեղադրված են 5 հատ 20 հեկտար մակերես ապահովող հակակարկտային կայաններ:

Դ. Հարակից և օժանդակող ճյուղերը

Մրգի վերամշակման արտադրամասեր և մթերման կետեր, որոնք ևս կնպաստեն այգեգործության զարգացմանն ու ընդլայնմանը, համայնքներում չեն գործում: Միայն Արտենի համայնքում World Vision կազմակերպության աջակցությամբ հիմնվել է մրգերի մեկ չորանոց, որն աշխատում է արտադրական հզորության կես չափով:

Գործում է 1 սառնարանային տնտեսություն Արագածավանում, այնինչ կարող էին գործել տասնյակ սառնարաններ:

Այգիների բուժ սպասարկման և որակյալ բուժանյութերով ապահովման ծառայություններ չեն գործում, եղած վաճառակետերն էլ մատակարարում են անհայտ ծագման և հաճախ անորակ դեղանյութեր: Չկան նաև մինի սրսկիչներով և հնձիչներով այգիներում՝ ծառերի շրջակայքում առաջացած խոտածածկից մաքրման ծառայություններ:

Բեռնատարների բավարար քանակով պայմանավորված՝ բեռնափոխադրումների ուղղությամբ խնդիրներ չեն առաջանում:

Չեն գործում մասնագիտացված տնկարաններ, բայց կան մասնագետներ, ովքեր պատվերի դեպքում ստանում են պահանջվող տնկիները: Սակայն, հաճախակի են դժգոհություններն այն մասով, որ 5 տարի խնամելուց հետո, երբ այգիներն սկսում են տալ առաջին պտուղները, պարզվում է, որ ծառերի մի ստվար քանակություն տեսակի (սորտի) առումով չի համապատասխանում նախնական պատվերին:

Ամփոփում

Երկու համայնքներն էլ մրցունակ են այգեգործություն ճյուղերում: Սակայն այգեգործության արժեքային շղթան կայացած չի: Երկու համայնքներում միասին տարեկան արտադրված ծիրանի և խնձորի բերքից մոտ 3800 տ. վաճառվում է չնչին գներով, վերածվում օդու կամ մնում այգիներում: Այնինչ սա բավարար պաշար է հենց համայնքներում վերամշակման կազմակերպման համար:

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- Նոր/արագահաս տնկիների ձեռքբերում և փորձարկում
- Ոռոգման ջրագծերի մասնակի բարեկարգում:
- Ոռոգման ջրի մատակարարման մեխանիզմների կարգավորում:
- Հակակարկտակայանների և ցանցերի տեղադրում:
- Այգեգործական ծառայությունների կենտրոնի հիմնում:
- Չորանոցների հիմնում:
- Վերամշակման /պահածոյացման փոքր արտադրամասերի հիմնում:
- Սառնարանային տնտեսությունների հիմնում:
- Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրում:

Անասնապահություն

Ա. Ճյուղի նկարագիրը

Արագածավանում անասնապահությամբ զբաղվում են բնակչության մոտ 90%-ը, իսկ Արտենիում՝ մոտ 400 տնտեսություններ: Հիմնականում բուծում են խոշոր եղջերավոր անասուններ:

Անասնապահության ոլորտի վիճակագրական տվյալներ.

	Արտենի	Արագածավան
Խոշոր եղջերավոր որից՝ կովեր	2416	4200
Ոչխար	253	3950
Խոզ	473	633
Թռչուններ	3200	3210
Արոտավայրեր	1061 հա	6427 հա

Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազյխաքանակի

Տնտեսությունների դասակարգումը	Մշակվող հողակտորների չափերը	Տնտեսությունների բախշվածքը
Խոշոր	50-100	25
Միջին	10-50	80
Փոքր	1-10	1350

Անասնապահության մեջ հավասար բաժին է ընկնում կաթի և մսի արտադրությունը: Անասունների հիմնական տեսակը ավանդական կովկասյան գորշն է: Մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը 2200 լիտր է, ինչը համընկնում է հանրապետության միջին ցուցանիշին: Հիմնականում կերակրում են առվույտով: Առանձին տնտեսություններում, որոնք ինչ որ չափով ապահովում են անասունի կերամիավորը, առվույտից բացի ներառելով այլ կերատեսակներ, կաթնատվությունը հասնում է մինչև 3-3,5 տոննայի: Արոտավայրերը լեռնային են և քանակությամբ բավարարում են անասնապահության զարգացման համար: Առաջատար ֆերմաներում, որոնք երկուսն են, կիրառվում են կթի ավտոմատացված սարքավորումներ և ժամանակակից այլ տեխնոլոգիաներ: Մնացած տնտեսություններն աչքի չեն ընկնում տեխնիկական հագեցվածությամբ: Համայնքներում դրական միտում կա անցնելու տոհմային ցեղերի անասնապահության, արհեստական սերմնավորման միջոցով: Արդյունավետության առումով ֆերմերների կարծիքները տարբեր են, սակայն երկու համայնքներում արդեն առկա են մոտ 250 գլուխ սեմենտալ և շվից տեսակի անասուններ: Այստեղ նույնպես, շատ անասնապահական համայնքների պես հիմնականում կիրառում են այն գիտելիքներն ու փորձը, որն իրենց է փոխանցվել սերնդե սերունդ: Միջին չափի ֆերմերներն համագործակցում են անասնակերի հավաքման, ձեռք բերման, դեղանյութերի ձեռք բերման, արոտը կազմակերպելու և այլ գործողությունների շուրջ:

Ոչխարաբուծությամբ հիմնականում զբաղվում են Արագածավան համայնքում: Ներգրավված են տնտեսությունների մոտ 10 %-ը: 200 և ավել գլուխ ոչխար ունեն 10 տնտեսություններ, 50-100 գլուխ՝ 10 տնտեսություններ, 5-50՝ մոտ 200 տնտեսություն:

Հիմնական տեսակներն են “Արագած”, “Բալբաս”, “Մազեխ”, “Էդելբանվյան”և “Ռոմանովյան”ցեղատեսակները: Արագած տեսակն իր առանձնահատկություններով (բրդատու) արդեն հայտնի է ՀՀ գրեթե ողջ տարածքում:

Անասնապահության եկամտաբերության հաշվարկ.

1	Անվանումը	Ոչխար	Կով	Բովոդ հորթեր
2	Օպտիմալ տնտեսություն	200 հատ	10 կով	20 բովոդ ցուլիկ
3	Ստացվող միջին արդյունքը միավորից	1 (2) գառ 2.5 կգ բուրդ	2 500 լիտր կաթ 1 հորթ	100 կգ միս
4	Ընդհանուր արդյունքը	200 հատ գառ 500 կգ բուրդ	25 000 լ կաթ 10 հորթ	2000 կգ միս
5	Մեկ միավորի մեծածախ գինը	1 գառը 30 000դրամ 1կգ բուրդը 800դրամ	150 դրամ մեկ լիտր կաթը 70 000 դրամ մեկ հորթը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը
6	ստացվող եկամուտը ('4'x'5')	6 400 000	4 450 000	4000 000
7	անհրաժեշտ նյութական ծախսերը	2 200 000	1 760 000	1 370 000
8	Եկամուտ հանած ծախսեր	4 200 000	2 690 000	2 630 000

Ըստ տարեկան խնամքի համար պահանջվող ծախսերի/ներդրման չափի (կետ 7), կաթի, տավարի և գառան մսի արտադրություններն ունեն գրեթե հավասար շահութաբերություն: Սակայն կաթի վերամշակումը համայնքում լրացուցիչ արժեք ստեղծելու հնարավորությունն է ընձեռում, ինչն էլ տեղի ունենում է: Իսկ մսի վերամշակում չկա:

Բ. Պահանջարկը և շուկան

Արտադրված կաթի մեծ մասը մթերվում է տեղի վերամշակողների կողմից: Համայնքից դուրս օրական մոտ 1 տոննայի չափով մթերվում է “Մարիաննա” ընկերության կողմից: Մեկ լիտր կաթը ընդունում են 160-170 դրամով: Որակյալ պանիր արտադրողները պատրաստ են նաև կաթի մթերման գինը բարձրացնել, եթե ֆերմերները հետևեն իրենց կողմից սահմանված կաթի պահպանման և սառեցման, տեղափոխման եղանակներին, ինչպես նաև ապահովեն կաթի պահանջվող որակը:

Գ. Գործունեների որակը

Արտենի և Արագածավան համայնքներում անասնապահության զարգացումն ու մրցունակությունն ապահովում են որակյալ ու բավարար քանակությամբ արոտավայրերի առկայությունը, արոտի սեզոնի երկար տևողականությունը (մոտ 8 ամիս)՝ կապված բնակլիմայական պայմանների, ինչպես նաև արոտավայրերում խմելու ջրի առկայության հետ:

Համայնքները չունեն հեռագնա արոտավայրեր և խոտհարքեր, որը բացասական է անրադառնում անասնապահության արդյունավետության վրա:

Տնտեսություններն ընդլայնելու համար լրացուցիչ Ֆինանսական միջոցները մատչելի չեն, բանկերի կողմից հիմնականում բարձր տոկոսադրույքով վարկեր են առաջարկվում, իսկ գրավը գնահատում են ցածր: Բանկերի ամենամոտ մասնաճյուղերը գտնվում են Թալինում:

Կատարվում է ամենամյա պատվաստման պետական աջակցությունը:

Դ. Հարակից և օժանդակող ճյուղեր

Կերարտադրությունը (առվույտի տեսքով) համայնքներում բավարարում է ներկա անասնազվաքանակի համար:

Չի կազմակերպվում խտացված կերերի արտադրության և վաճառք:

Բեռնափոխադրումների ծառայությունն համայնքներում այս ոլորտի համար ևս բավարար է:

Համայնքներում առկա են անասնաբույժեր, ովքեր իրականացնում են պահանջվող բուժօգնությունը, սակայն արհեստական սերմնավորման և անասնապահությանն ու անասնաբուժությանը վերաբերող ժամանակակից նորամուծությունների մասով երաշխիքային և որակյալ ծառայություններ չեն գործում: Միայն խոշոր ֆերմերներից մեկն է համագործակցում անասնապահության բնագավառում մասնագիտացած CARD կազմակերպության հետ՝ տոհմային անասուններ բուծելու և խնամքի նոր տեխնոլոգիաների շուրջ:

Գործում են կաթի մթերման և վերամշակման կետեր, իսկ տավարի մսի վաճառքը կազմակերպվում է վերավաճառողների միջոցով՝ կիլոգրամը 1900-2000 դրամով: Մսի վերամշակման կետեր չեն գործում:

Պանրի արտադրություն

Արագածավանում գործում է երկու պանրի արտադրամաս: Առաջատարը համարվում է Գոռ Սարգսյան Ա/Ձ-ն, որը մթերում է համայնքի կաթի մոտ 50%-ը և հայտնի է “Gloria cheeses (GL)” ապրանքանիշով, իսկ մնացած մասը մթերում են համայնքում գործող մյուս պանրի գործարանն ու տնային պայմաններում արտադրողները:

Արտենիում գործում են մոտ 8 պանրագործական արտադրամասեր, որոնք արտադրում են տնային պայմաններում: Արտադրողներից շատերը կաթի հիմնական մասը մթերում են հարևան Արգինա, Արագած, Գետափ և Բագրավան համայնքներից՝ դժգոհելով համայնքում արտադրված կաթի որակից, որը շատ հաճախ ջուր է պարունակում: Մթերումը կազմակերպում են սեփական մեքենաներով: Տնային եղանակով պատրաստված պանիրը վաճառում են 1400-1700 դրամով Երևանի, Էջմիածնի և Արմավիրի շուկաներում/խանութներում:



ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- Անասունների արհեստական ճանապարհով սորտափոխում:
- Ֆերմաներում գոմային պայմանների բարելավում:
- Անասնապահական և անասնաբուժական ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնում (համատեղում այգեգործական կենտրոնի հետ):
- Ոլորտի նորամուծություններին վերաբերող վերապատրաստումներ/ դասընթացներ:
- Երկխոսության կազմակերպում ֆերմերների և պանիր արտադրողների միջև՝ կաթի պահպանման, սառեցման և տեղափոխման շուրջ:
- Ստանդարտացված և որակյալ պանրի արտադրությունների կազմակերպում:
- Ընդհանուր պանրի բրենդի մշակում:

Քարամշակում

Համայնքում գործում է երկու հիմնական քարամշակման արտադրություններ՝ “Արագած պեռլիտ” ԲԲԸ և “Լևադա” ՍՊԸ: Ընկերություններն ապահովում են 45 հիմնական և 150 սեզոնային աշխատատեղ:

Արտադրանքի տեսականու մեջ մտնում են՝ պեռլիտ, մանր տեսակավորված պեռլիտ և այլ երկաթբետոնյա կոնստրուկցիաներ:

Աչքի ընկնող արտադրանքներից է Ֆիլտրը, որն օգտագործվում է նավթարդյունաբերության, մետալուրգիայի և ագրոարդյունաբերության մեջ:

Արագածավանի պեռլիտը դասվում է աշխարհում ամենատրակյալների շարքին, ունի մեծ պահանջարկ համաշխարհային շուկայում, սակայն արտահանման ժամանակ էականորեն բարձրանում է ապրանքի ինքնարժեքը: Ապրանքի ինքնարժեքը բարձրացնող երկրորդ գործոնը բնական գազի բացակայությունն է համայնքում: Արտադրությունում գազի փոխարեն օգտագործում են դիզ. վառելանյութ, ինչը մոտ երեք անգամ թանկ է:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

